

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՆՁԱՐԱՆ ԽՆԱՅՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Խախտութեան հարկաւորութիւնը : —
Խնայութեան գանձարանին նման ընկերու-
թիւններ :

Թիֆլիս շատ կերպով մարդուս կեն-
դանիներէն ինչ մեծ տարբերութիւն
և դերազանցութիւն ունենալը յայտնի
կը տեսնենք, բայց ան ամէն կատարե-
լութիւններն ալ պսակողը ու կերպով
մը մարդկութիւնը աստուածային բնու-
թեան հետ միացընողը մարդուս նա-
խատեսութիւնն է : Իրաւ է որ կենդա-
նեացմէ ոմանց, ինչպէս մեղուին ու մըր-
ջիւնին ըրած գործողութիւններէն տե-
սակ մը նախատեսութիւն անոնց վրայ
ալ կը տեսնենք, բայց մարդուս ունե-
ցածէն որչափ տարբեր է անիկայ . ա-
նոնց ըրածը պարզ բնական ազդեցու-
թենէ առաջ եկած ըլլալուն համար,
ցուցուցած նախատեսութիւնին ալ հար-
կաւ հասարակ ու անխտիր բան մըն է .
իսկ մարդուս նախատեսութիւնը բոլ-
րովին տարբեր է . ազատ ու իմացական
կամքէ առաջ եկած ըլլալուն համար՝
մարդկանց բարուցը՝ վիճակին և ժա-
մանակին հանգամանացը յարմար ալ կը
փոփոխի, ու ոչ ժամանակի և ոչ տե-
ղոյ սահման մը ունենալով՝ ոչ միայն
առանձին մարդկանց պիտոյքը կը լեցը-
նէ, հապա ամբողջ ժողովուրդներ ալ
կը հոգայ կը դարմանէ . և ոչ միայն ներ-
կայ ժողովուրդներուն, այլ նաև անոնց
ապագայ յաջորդացն ալ երջանկութեն
ու հանգստութեանը փոյթ կ'ունենայ :
Ըսով է որ մարդուս բնութեան վրայ
ունեցած իշխանութիւնը ոչ երբէք կը
պակսի . ասով է դարձեալ որ մարդիկ
ալ վիճակով իրարմէ կը զանազանին,

մէկը հարուստ կ'ըլլայ ու մէկալը աղ-
քատ . վասն զի որչափ որ մէկուն նա-
խատեսութիւնը աւելի է, այնչափ ալ
իր բաները ուրիշիններէն աւելի յաջող
կ'ըլլան :

Թիէ որ ամէն բանի մէջ նախատե-
սութիւնը մարդուս հարկաւոր է, ա-
մենահարկաւոր կ'ըլլայ ան բաներուն
մէջ՝ որ իր անձնական գործոցը և պի-
տոյիցը կը վերաբերին . աս մտքով նա-
խատեսութեան երբեմն անհրաժեշտ-
կ'ըսենք, երբեմն ալ խնայութիւն :

Տնտեսութիւն, ինչպէս բառին կազ-
մութենէն ալ յայտնի կ'երևնայ, տու-
նը և ընտանիքը լաւ կերպով կառավա-
րեն է . ուստի աս տնտեսութիւնը աղ-
քատին ալ հարուստին ալ միօրինակ
հարկաւոր առաքինութիւն է . առանց
ասոր մէկը հարուստ ալ ըլլայ, տանը
բաները տակնուվրայ կրնայ ընել :

Խնայութիւնը տնտեսութենէն ալ
հեռու կը նայի . վասն զի անով մարդս
ներկայ բաներէն ապագային համար
բաժին կը պատրաստէ, աւելորդ ծախ-
քերէ ետ կենալով՝ բերնէն կտրածը
մէկդի կը դնէ, ապագային համար նա-
խատեսութեամբ պահելով : Խելացի
ու բանը գիտցող հարուստն ալ պէտք է
խնայող ըլլայ . վասն զի ո՞ր գիտէ, ժա-
մանակ անցնելէն ետքը ինչ հասարա-
կաց կամ առանձնական փորձանքներ
կրնան պատահիլ, ինչ յանկարծական
դժբաղդութիւններ գլուխը կրնան գալ
որ իր բանը կրնան աւրել :

Իսկ արդ թի որ խնայութիւնը հա-
րուստին համար խոհեմութիւն կը սե-
պուի, ամենահարկաւոր բան է այն
մարդուն համար որ ամէն օրուան հացը
ճակտին քրտինքովը ու ձեռքի աշխա-
տանքովը պիտի վաստակի : Վասն զի
օր կրնայ գալ որ աշխատանքը պակսի,
առնելիքը ուշանայ, հիւանդութիւն մը՝
փորձանք մը վրան հասնելով՝ ստիպուի
պարապ կենալ, և կամ տարիքը առնե-
լով բանի գործի հետ չկարենայ ըլլալ :
Ի՞նչ պիտի ընէ այնպիսի ատեն այն
մարդը որ քիչ մը ստակ մէկդի չէ դրած,
ամէն օր վաստակածը կերեր է ու ան

սև օրերը մտքէն ալ չէ անցուցած . մի-
թէ երեսը կը բռնէ երթալու ուրիշնե-
րէն ստակ մուրալու :

Եւանկ է ահա աղքատին բանը . հա-
րուստին պէս չէ որ աւելորդ ու անօ-
գուտ ծախքերէն կտրէ , հապա շատ
անգամ հարկաւոր ու օգտակար ծախ-
քին վրայ պիտի ընէ խնայութիւնը՝ ա-
պագայն մտածելով :

Հարուստ մարդուն ու աղքատին ը-
րած խնայութեան մէջ ուրիշ մեծ տար-
բերութիւն մըն ալ կայ . հարուստին
մէկդի դրած ստակը գրեթէ առանց ի-
րեն իմանալուն շուտով կ'աճի , նոր դը-
րամագլուխ մը կ'ըլլայ . իսկ խեղճ աղ-
քատը աշխատանքով քանի մը ստակ
իրարու վրայ հաղիւ կը դնէ , այնպէս
որ տարիներ կ'անցնին ու ան ժողված
ստակը դեռ այնչափ քիչ կ'ըլլայ որ չկր-
նար անկէջ շահ մը տեսնել , կամ յոյսը
անոր վրայ դնել իր ծերութեան կամ
խեղճութեան օրերը հանգիստ անցը-
նելու համար . քիչ մը կարօտութեան
մէջ ինչալուն պէս՝ ան ստակն ալ հար-
կաւ կ'ուռէ կը հատցնէ :

Ուրեմն ինչ ճար ընելու է որ աղքա-
տին ըրած խնայութիւնը ժողովուրի , ա-
պահով տեղ մը դրուի , վրան պէտք ե-
ղած հոգը ըլլուի , ու չափաւոր շահով
մը շատցուի . — ահա աս բանիս մէկ-
հատիկ ճարը Գանչարան խնայութեան ը-
սուածն է . և թէ որչափ օգտակար ե-
ղու աս բանս աղքատաց վիճակը լաւ-
ցընելու համար , Աւրուսայի մէջ եղած
անթիւ օգուտներէն յայտնի է :

Երկէ քանի մը հարիւր տարի առաջ
ալ շատ ընկերասէր ու մարդասէր մար-
դիկ ետեւէ ընկած էին որ աղքատու-
թեան դառնութիւնը կերպով մը քաղ-
ցրացնեն ու վիշտերը թեթեւցնեն .
անոնց ամէն մէկուն հնարած կերպերը
հոս յիշելը թէպէտ օգտակար ու զուար-
ճալի ալ կ'ըլլար , բայց մենք ամենէն
գլխաւորները ու ինչուան հիմա տեւա-
կանները յիշատակելով գոհ ըլլանք :

Ի աւերեստիոս (Դ)նթի անունով նէա-
պօլսեցին ասկէ երկու հարիւր տարիի
չափ առաջ , այսինքն 1653-ին ատենները

այսպիսի ընկերութիւն մը հաստատեց
որ իր անունովը (Դ)նթիան ընկերու-
թուեցաւ : Եւ ընկերութեան գրուող-
ները որը շատ որը քիչ՝ մէյմէկ գումար
շահու կը դնեն , ու մէջերէն մեռած
մարդիկներուն ընկած շահը միշտ գըլ-
խոյն վրայ զարնելով՝ ողջ մնացողներուն
կը բաժնուի . և թէ որ ընկերութեան
ամէն անդամները մեռնին , բոլոր գըլ-
խը կենդանի մնացողին է . անոր ալ
մեռնելէն ետքը ատենով ստակը տէրու-
թեան կ'անցնէր , բայց հիմա ան մար-
դուն և կամ ընկերութիւնը ձեւացընող-
ներուն ժառանգացը կ'երթայ :

Եւ ընկերութիւնը , ինչպէս որ յայտ-
նի կը տեսնուի , այնպիսի հասոյթ կ'ամ-
ուռնիկ մըն է որ ստորագրուողին կեն-
դանութեանը ատեն միայն քանի կու-
զայ , ուստի գործաւոր ու տղոց տէր
մարդուն այնչափ շահաւոր չէ . անկէ
զատ՝ իր ստրկին շահը կ'ամ գրամագլու-
խը երբոր ուզէ չկրնար աւնուլ ընկե-
րութենէն . անով շատ գժուարութիւն
է աղքատի մը համար՝ խնայութեամբ
աւելցուցած ստակը անանկ տեղ մը
դնելն որ ուզած ատենը չկարենայ ձեռք
բերել :

Եւոր ներհակ ուրիշ ընկերութիւն
ներ ալ կան , որոնց քով մարդ մը իր
կենդանութեան ատեն խնայութեամբ
ժողված ստակը կ'ապահովցնէ , ու քա-
նի որ ողջ է՝ անկէ շահ մը չառնէր , իսկ
մեռնելէն ետքը գրամագլուխը բերած
շահը իր ժառանգներուն կ'երթայ :
Ստորագրուող մարդը իր տարիքին ու
վիճակին համեմատ տուրք մը կուտայ
ընկերութեան ամէն տարի . օրինակի
համար՝ երիտասարդը քիչ բան կուտայ ,
իսկ տարիքը առած մարդուն տուած
տարեկան տուրքը աւելի շատ պիտի ըլ-
լայ : Եւ ընկերութիւնը աւելի այնպիսի
մարդկանց կրնայ յարմար դալ՝ որոնք չա-
փաւոր՝ բայց ապահով եկամուտ մը ու-
նին , և կ'ուզեն անիկայ շատցնել ու
անանկով իրենց որդւոց կամ ընտանեա-
ցը աղէկ ժառանգութիւն մը ձգել :
() օրինակի համար , տէրութեան մշտնը
ջենաւոր պաշտօնեայ մը կրնայ իր թո-

շակին մէկ մասը ասանկով մէկդի գնել ու շահեցնել . բայց իր ձեռքին աշխատանքովը ասորդ մարդուն բանը տարբեր է . վասն զի այսպիսւոյն համար օր կուգայ որ ոչ աշխատանք կ'ունենայ և ոչ վաստակ . ան ատեն ինչ պիտի ընէ , տարեկան տուրքը ուսկից պիտի վճարէ . երբոր ան տուրքը չվճարէ , ընկերութեան կանոնն է որ ան մարդուն ապահովուցած ստրկէն կ'առնէ . որով դրամագլուխը կը փճանայ : Իսկ է թէ արհեստաւորը այսպիսի վտանգի մէջ պիտի չդնէ ինքզինքը :

Փոխադարձ ընկերութիւններ ալ կան , որոնց անդամ գրուող մարդը շաբաթը կամ ամիսը անգամ մը այսչափ բան կը վճարէ , ու ընկերութեան պարտքն է անոր հիւանդութե , կարօտութեան ու ծերութեան ատենը ստրկով օգնել : Եւ այսպիսի ընկերութեանց վրայ ուրիշ ատեն երկար պիտի խօսինք . հոս այսչափ ըսենք որ ասոնք շատ օգտակար են , բայց ափսոս որ իրենց օգուտները որչափ որ կը յուսացուէր՝ չտեսնուեցան : Եւ գլխից մէջ զարմանալի կերպով մը մէկէն ՚ի մէկ շատցան ասոնք , բայց աղէկ ու հաստատուն հիման վրայ դրուած չըլլալուն համար՝ շատերը ցրուեցան , ու խեղճ ընկերները իրենց ստակը կորսնցնելով փճացան . և պատճառը ան էր որ այսպիսի ընկերութիւնները իրենց կարողութենէն վեր խոստմունքներ ըրեր էին որ չկրցան կատարել : () Գէլը ըսուած ասանկ ընկերութիւն մը կար հոն , և ստորագրուող անձանց թիւը չորս հարիւր հազարի կը հասնէր . և սակայն չկրցաւ դիմանալ , ցրուեցաւ . որով շատ մարդիկ ալ պաղեցան ու այնպիսի ընկերութեանց մէջ մտնելէն զգուշացան :

Եւսոնցմով կ'իմացուի որ դիւրին բան չէ այսպիսի նիւթի մէջ լաւ , ապահով ու օգտակար ընկերութիւն մը գտնելը . և ան ամէն ընկերութիւններն որ յիշեցինք՝ աս մեծ պակասութիւնս ունին որ մէյմը որ անոնց ընկեր գրուեցար՝ ալ չես կրնար դուրս ելլել , կամ ստակդ բոլորովն և կամ ըստ մասին ետ առնուլ .

ուստի կամ ինչուան ետքը ընկերակցութեան մէջ մնալու է , և կամ ան ստրկէն յուսահատելու է . որով կ'իմացուի թէ արհեստաւոր կամ աղքատ մարդուն բանը չէ ասոնց անդամ գրուիլը , և ան ազատութիւնը որ պիտի ունենար իրեն հարկաւոր ապրուստին կամ ստրկին վրայ՝ կորսնցնելու :

Եւ իայն խնայութեան գանձարանն է որ մէկալ ընկերութեանց աս պակասութենէն ազատ է . վասն զի ամէն մարդ կրնայ երբոր ուզէ ասոր մէջ մտնել , ընկեր գրուիլ , և երբոր ուզէ կրնայ ընկերութենէն ելլել . քանի որ դրած դրամագլուխը գանձարանին մէջ է , շահ կը բերէ , կը շատնայ . ուզէ՞ ետ առնել , բաւական է որ երթայ ուզէ՞ մէկէն կ'առնու . չէ , ըսենք թէ ան կարօտութիւնն որ ունէր՝ անցաւ , կ'ուզէ նորէն գանձարանը դնել՝ մէկէն ընդունելի կ'ըլլայ ինքիւրքը , և առանց ամենաւին մէկ մնաս մը կամ կորուստ մը ունենալու՝ նորէն իր արդեանցը պտուղը կը վայելէ :

Եւ այսպիսի ընկերութեան մը օգտակարութիւնը միայն հոս յիշեցնելէն ետքը , հետեւեալ յօդուածներով հաստատուելուն պատմութիւնը և գործադրելու միջոցները կը ստորագրենք :

Ով որ առանց նախատեսութեան կը քննադատէ , անոնց բան մը ունենալու կ'արթննայ :

Մէյմը տղաք չեն մտածեր գտնելը , մէյմըն ալ տղայամիտ մարդիկ :

Մարդ ըսելու մարդն ան է որ ըլլալու չարեաց նախատես կ'ըլլայ , ու երբոր չարիքը հասնի՝ օրով կը համբերէ ու կը յաղթէ :